

ցեղական տարազ, որ կը կոչուի քիւրդ աշխրաթաղետական տարազ: Յեղապեաները շատ շուտով կ'ընդունին տարազի փոփոխութիւնը, եթէ անոնք հեծեկազօրի յարմարութիւն ու թեթեւութիւնը կը ներկայացնեն. և օտար ձեն ընդունելով կը ցեղականացնեն, կամ լայն իմաստով կը քրդացնեն:

Քիւրդը հզօր ու վառ երեւակայութիւն ունի. որ յատուկ է մանուկ ժողովուրդներու. եղեր են ցեղապեաներ՝ որոնք իրենց ձիւ ասպանդակն անգամ արծաթէ չինել տուած են: Դիտաւորութիւննին է. երբ նժոյգը հեծնեն, հազուադէպ հրացաններէն մէկը թեւ ձգած, ու ամենընտիր քանդակներով զարդարուն թանկագին ոսկեղօծ սուրը կախած՝ դաշտ ու սար, գիւղ ու քաղաք երթալու լինին, արեւի ճառագայթներու տակ փայլող ուրիշ արեւի մը նման, իրենց նայող բոլոր գեղեցկութիւններու տեսքն ու սիրտը իրենց վրայ սեւեւն, ու իրենք Աշխրաթի երիտասարդութեան փառքը դառնան:

Ահա ասոր է որ կը հետեւի մեղկութիւն ու արկած: Ազնուականն ալ ձանձրացած է սարի լանջերուն սառնորակ աղբիւրներու գլխին, բնութեան տնկած ծառերու հովանեաց տակ՝ կանաչի վրայ ընկողմանելով դառան խորոված ուտելէ. բանաստեղծներու հրաշակերտած գեղունիներու պատկերները, անոնց չնորհները գովող երգիչներու մեղօտիական երգերը, ֆիզիքական ու մտաւոր անդրադ կեանքը, զայն մեղկացուցած թաւալ թաւալ (թաւիլ տալ) կը գալարեցնեն մարգին վրայ: Նա միշտ տխուր է ու մաղձիկ. չքախմբի մտերիմները կը մօտենան կամացուկ որոնելու անոր սրտի լաղձանքները, բայց ոչ մի արտայայտութիւն. իսկ իրենք արդէն պատմութեան մը պէս ուսումնասիրած են ազնուական քիւրդ բնաւորութիւնը. ամեն մէկը կ'առաջարկէ իր տեսած «Հուրի մլէքը», բայց ո՛ր են ազոնք, քիւրդերու մէջ հազուադէպ լինելով, անպատճառ պիտի գտնուին հայ գիւղախմբապետներու տունը, գիւղացիներու մէջ:

Ահա վիպական կեանքը սկիզբ կ'առնէ. քիւրդ ազնուականը անդադար կը ճամբորդէ, իր ձանձրոյթը փարատելու